# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## (ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԳՈՇՆ ԿՈՉԻՒՐ.)

(Շարունակութիւն) *

Իսկ խաչեցար առեալ ոչ ի Հարց միայն է, այլ ի մարգարէից [1] գուշակեալ և յաւրինաց նկարագրեալ և յառաքելոց եղեալ և հրեշտակաց վկայել [2], և որպէս պատմէ Ներսէսիոս Հայրապետն Հոռմայ [3], եթէ ոչ եղև հնար Յուսիփայ [4] իջուցանել զմարմինն ի խաչէն, զի փայլատակունք հատանէին ի փորուածէ բևեռացն և ոչ կարէր հանգարտել, ապա դձեռն տարածելով [5] աղաւթեաց [6], այսպէս ասելով. սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեայ [7] մեզ. և երիցս զայս ասելով իջոյց . . . . [8] և պատեաց: Իսկ առաքելոցն յաւուրսն [9] ուրբաթի և ի չորեքշաբաթի նախ զայս ասէին կցորդիւ, և ապա գիրս ընթերցեալ [11]՝ պատարագ մատուցանէին. բայց աւրէնս ո՛չ եդին, այլ ըստ աւուրց հանդիպմանց [12] փոխեալ [13], որպէս ի յարութեանն զաւրերն [14] ասել, և յել [15] տնաւրինականսն, ուստի յայտ է թէ Որդւոյ ասի և ոչ երրորդութեանն. Եւ ի փոխել [16]) Աստուածամաւրն, և զկնի երից [17] աւուրց՝ բացեալ զգերեզման [18] ոչ գտին զմարմինն. ապա Հոգի սուրբ ազդեաց [1] զփոխիլն առաքելոցն՝ Թովմաս [2] առաքելոյն աղաւթեաց. Փառաւորեալ միշտ սուրբ կոյս [3] Աստուածածին Մարիամ, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քո և Աստուծոյ [4] մերոյ. զոր և այլ առաքեալքն առեալ եդին զկնի աղաւթիցն Յուսեփայ [5], որ է սուրբ Աստուածն. Եւ այսպ [6] կայ ի գիրսն Ներսեսեայ [7] Հռոմայեցւոյ, որ կանոնաց լրմունք կոչին, վասն յիշատակի եկեղեցւոյ Քրիստոսի զայս բանս գրոշմէ և գրէ ի գիրս զատկաց, զոր ընթերցեալ Յովհաննու [8] Ոսկեբերանի, կարգեց յիւր [9] ժամանակի, զոր արգելուին Թոփելեանքն [10], թէ զՈրոգինին խորհին, և առ ժամանակ ինչ դադարէին բանքն. Եւ ապա Կիւրեղ ընդդէմ Նեստորի կարգեաց ի ժողովն Եփեսոսի, և ասացին. Միածին Որդի և Բանդ Աստուած, և զսուրբ [11]. Աստուածն խաչեցարիւն հանդերձ, զոր բարձին ի ժողովս Քաղկեդոնի. որպէս գրէ Պետրոս Անդոքացին [12] զամենայն եղեալսն ի Հայք. գրէ և Կիրղոս, գրէ և Տիմոթէոս. Բայսոսիկ լուեալ մերն Իսահակ Հայրապետն [13], այնուհետև հաստատեաց ասել խաչեցար, թէպէտ [14] ի Լուսաւորչէն կարգեալ էր. Եւ յետոյ հարքն մեր վասն Նեստորի աղանդին ժողովեալ ի Դուին և ի Մանազկերտ, և եդին սահման եթէ որ ոչ ասէ զխաչեցարն՝ յամենայն սրբոց զգուշեալն, եղիցի նզովեալ, զի զերախտիսն Քրիստոսի յիշեմք, և ոչ թշնամանիմք. զի հրեշտակք և առաքեալ [15] Պաւղոս նովաւ պարծին.

Իսկ վասն առաջաւորացն [16] պահոց այսպէս գտաք գրեալ. զի յորժամ գնար Տրդատ և սուրբն Գրիգոր ի Հռոմ, և միաբանութեամբ [17] դաշինս եդին՝ վասն զԼուսաւորիչն և զՏրդատ պատուելոյ զառաջաւոր պահքն [18] յիւրեանց ամիսն եդին, պահեալ [19] ի Կոստանդիանոսի պահոցն տեղիս. և մեք զՍեղբեստրոս և զԿոստանդիանոս պատուեցաք, և ի

* Տես Արարատ 1901 թ. համար Ա. եր. 55:

1. ի մարգարէից.
2. եւ ի հրեշտակաց վկայեալ.
3. Հռոմայ.
4. Յովսեփայ.
5. տարածեալ.
6. Ա. աղօթից.
7. ողորմեա.
8. ի խաչէն.
9. յաւուրս.
10. Օ. ի.
11. Ա. ընթերցեալ գիրս.
12. հանդիպմանն.
13. փոխել.
14. զյարեարն
15. յայլ.
16. ի փոխելն
17. Օ. երից
18. զգերեզմանն

1. Հոգին սուրբ ազդել.
2. Թովմաս.
3. կոյսդ.
4. Աստուծոյդ.
5. Յովսեփայ.
6. ա. այսօրիկ բ. այսոքիկ.
7. ի գիրս Ներսեսեա.
8. Յոհաննու.
9. յիւրում.
10. Թէոփիլեանքն.
11. սուրբ.
12. Անտիոքացին.
13. բ. Հայրապետ.
14. թէպէտ եւ.
15. առաքեալն.
16. առաջաւորաց.
17. միաբանութեան.
18. զյառաջաւոր պահսն.
19. պահել.

կատարման առաջաւորացն Տրդատայ և Կոստանդիանոսի տաւնէաք[1] ընդ նոսայ, և նոքա ընդ մեզ. զոր երարձ Մարկիանոս ի ժողովն Քաղկեդոնի. Եւ իբրև երարձ զպահոն՝[2] խափանեցաւ և տաւնեալ.[3] իսկ մեք զմեր Լուսաւորչին հաստատեալ կարգն[4] պահեցաք.

Արդ, զի ի բաժանմունսն՝ են որ ի սատանաէ[5] է, որպէս մանիքեցիքն,[6] և այլքն նմանք նոցայ, և ի փառասիրութենէ, որպէս ժողովն Քաղկեդոնի, և յանկարութենէ, որպէս Հայոց կարգաց[7] եկեղեցւոյ, և յանձնիշխանութենէ, որպէս կարծելն իւրաքանչիւր ազգաց որք[8] լաւ լինել, և է յանգիտութենէ և յանուսումնութենէ, որպէս իւրաքանչիւր ազգս տեսանեմք արտաքոյ գրոց վկայութեան հակառակիլ,—վասն[9] անհնարին տեսանեմք զգալն ի միաբանութիւն, զի ամբարտաւանել[10] ոչ հնազանդին միմեանց, և բարձան բարեպաշտ թագաւորքն յունաց և հոռոմոց,[11] զի նոքաւք լինէր տիեզերական ժողովն, և զի չորք էին ազգ հիմն ժողովոյ՝ ըստ չորից աւետարանչացն. յոյնք և հոռոմք, հայք և ասորիք. զի չորից ազգաց հայրապետք էին մեծամեծ[12] ժողովն՝ ի Նիկիա և ի Բիզանդիայ[13] և յԵփեսոս. և թէ իւրաքանչիւր գլուխն թողոյր զխոտելին և առնոյր զգովելին՝ լինէր միաբանութիւն ազգաց. և թէ չորք ազգ միաբանէին՝ ամենայն ազգ ընդ նոսա միաբանէին, զի վերք զյունաց[14] ունէին[15], և նոքա միաբանէին ընդ նոսայ. Եւ արդ այսպէս լինէր, թէ զգլխաւոր[16] իրս ուղղէին, մանրագունիցն չլինէր հակառակութիւն, և այս են գլխաւորքն. զժողովն Քաղկեդոնի նզովէին և զերից սուրբ ժողովոյ[17] զաւանդեալն հաստատէին զհաւատս և զտաւնս և զխմոր և զջուր խափանէին, և ամենեքեան գրոց վկայութեամբ միմեանց հնազանդէին՝ զԱստուածն ուրախ առնէին[18].

Այլ զի թերին ասացաք զամենայն ազգաց, և այժմ զգովելին ասացից. Յոյնք իմաստունք են և ողորմածք, ուսեալք ի Յոհանէ[19] Ոսկեբերանէ. Հոռոմք զգաստք[1] են աղաւթից և հնազանդ[2] առաջնորդաց. ասորիք խոնարհք են և ճգնողք. Հայք պահողք են և ողորմած[3] գերելոց և եկեղեցականաց, սրբութեան սիրողք. վերք սրբոց և վանօրէից[4] մեծարողք, և անբասիր առաջնորդաց: Բայց միթէ խափանի չար նախանձն սատանայի, որ զչարն տեսանել տայ և զբարին ոչ. Բայց կարծի թէ չտայ մեզ աշխարհին[5] առնել, լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ զթշնամութիւն բառնէաք ի միմեանց և բարեկամ լինէաք և զկարգ միմեանց չհայհոյէաք. Զի Աստուած կարող էր և զամենայն ազգ մի առնել, այլ բռնադատեաց[6] զմեզ և զամենայն ազգի ընկալաւ զպաշտաւնն[7] և զկարգ, մինչ ի ժամանակ դատաստանին թոյլ տալով. Զի Ե. ազգաց[8] չտեսանեմք այնքան պատճառք[9], որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ[10] կամ զտաւնն[11], և նա ճանաչէ[12] զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն. Այլ զարիանոսաց[13] չընդունի և ոչինչ ի կարգաց, զի արարած ասեն զՈրդի, նոյնպէս զհոգեմարտից և զեւնոմիանոսաց[14], զնեստորականաց և զեւտիքիանոսաց[15] և զնաւատիանոսաց, և զսոցին նմանեաց. Այլ թէ ասացեալ հինգ ազգդ[16] ոչ կարեն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց[17] չլինել՝ զխաչ և զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ. բայց այնքան սատանայ էարկ զատելութիւն[18], զի խաչ և զեկեղեցի միմեանց անարգեն և նախատեն[19], որով և Քրիստոս հայհոյի. Զի որպէս հարկաւոր ընկալաւ Աստուած զբաժանումն լեզուացն, միթէ և զայս ընկալաւ զբաժանումն կրաւնից, զի միմեանց նախանձով զբարին գործիցեն և ոչ չար. Արդ, բարիատեացն սատանայ զբարիս խափանէր[20] և զչարն յորդորէ առնել, զի յոյնք և վիրք այնքան բամբասողք են Հայոց, զի զեկեղեցի աւրհնեալ[21] քակեն և զսեղան, յորոյ վերայ պատարագեալ է Քրիստոս, արտաքս ձգեն, և ասեն չ…

1. Ա. տօն է.
2. Ա. Օ. զպահսն.
3. տօնելն.
4. զկարգեալն նաւատօնն.
5. սատանայէ.
6. մանիքեցիք.
7. կարգաց հայոց.
8. յիւրաքանչիւր ազգաց որք.
9 եւ վասն այն.
10. ամբարտաւանեալ.
11. հոռոմոց եւ յունաց.
12. ի մեծամեծ.
13. Ա. ի Բուզանդիա. Բ. ի Բիւզանդիա.
14. զՅունացն.
15. Օ. ունէին.
16. Ա. զգլխաւորս.
17. ժողովոյն.
18. Ա. չինէր.
19. ի Յովհաննէ.

1. զգաստ.
2. հնազանդք.
3. ողորմածք.
4. վանօրէից.
5. աշխարհի զբարին.
6. յբռնադատեաց.
7. զպաշտօն.
8. ազգացդ.
9. պատճառս.
10. Օ. զհաւատ.
11. զտօն.
12. ճանաչէ.
13. զարիանոսացն.
14. զեւնոմիանոսաց.
15. Օ. զնեստորականաց եւ զեւտիքիանոսաց.
16. ասացեալ Ե. ազգացդ.
17. միմեանց թշնամիք.
18. զատելութիւնն.
19. ատեն եւ անարգեն.
20. խափանէ.
21. զօրհնեալ.

զենուլ [1] յեկեղեցի Հայոց, և այնպէս զաւրհնութիւն հանել զՀայոց. զայդ միայն Յուլիանոս արար ուրացողն Քրիստոսի՝ զմկրտութիւն [2] իւր չան արեամբ կամեցաւ լուծանել: Եւ արդ յոյնք և վիրք և հայք [3] զմկրտութիւն միմեանց կամին լուծանել՝ կրկին մկրտելով զմիմեանս, զոր ընդդէմ կանոնաց գործեն. զի մի է Քրիստոս և մի մկրտութիւն. * և յաղագս այնորիկ հարկ է ցուցանել [4], թէ զոր արժան է մկրտել յաղգաց և զոր ոչ. յորժամ գան ի կաթուղիկէ եկեղեցւոյ հաւատս՝ զո՞րս կնքաւորել կամ զորս [5] սուրբ իւղովն աւծանել, կամ որո՞ց [6] միայն աղաւթս առնել, կամ զիա՞րդ զհրայս [7] և զհեթանոսս մկրտել և լուսաւորել [8] սուրբ աւազանաւն, կամ զաւակ [9] Քրիստոնէի որպէս մկրտել [10]: Զի որք կամիցին Աստուծոյ երկիւղիւ [11] զհետ լինել առանց ծուլութեան՝ զհաճոյսն Աստուծոյ կատարիցեն, ապա թէ ոք ծուլասցի և կամ արհամարհիցէ և թերակատար առնիցէ յԱստուածային կարգէն՝ մեք զարծաթն արկցուք ի սեղանաւորս, իսկ Տէրն եկեալ զիւրն պահանջիցէ [12] տոկոսիւք, և մեք անպարտ գտցուք:

Եւ արդ այսպէս [13] պարտ է ընդունել զհերձուածողսն [14] յեկեղեցի Աստուծոյ՝ զարիոս, [15] Կաթարոս [16], զմակեդոնիանոսս, զսամբատիանոսս [17], զնաւատիանոսս, զչորեքտասաներակս [18] և որք զչորրորդութիւն խոստովանին, և զապաւղինարիոս. սոքայ ամենեքեան նզովեսցեն նախ զհերցուածս [19], որում [20] մոլորեալ էին, և ապա զամենայն հերձուածս, յորում [21] հակառակ է ողջամիտ վարդապետութեւ . . . եղեցոյ, [22] և յետ այսորիկ ուսցին զճշմարիտ հաւատս եկեղեցւոյ, և ապա կնքէ քահանէն [23] զճակատն և սիրտսրն և [1] և զամենայն զգայարանս [2] սուրբ մեռոնաւն, որպէս թէ այժմ լուսաւորեալ եկին ի հաղորդութիւն ի փրկական և ի ճշմարիտ արեան [3] Քրիստոսի. իսկ մկրտութեան վերստին չեն պէտք՝ լուացման ջրոյն, և արասցէ այսպէս. արժան է պահել աւուրս Ե. և պարապեալ [4] աղաւթից առաւօտուն [5] և երեկոյն, և աշակերտեալ [6] զմերս. Եւ ապա կացուցանէ զնոսա [7] առաջի սուրբ աւազանին, և ասել տայ այսպէս. Նզովեալ այս անուն հերձուած, յորում իւրն [8] էր և հաւանակիցք նորա, և խորոզք [9] զնորայսն, քանզի հրաժարիմք ի նմանէ և յամենայն հերձուածական նորա յաղանդոյն [10], և հաւատամք ի մի Տէր և միանական սուրբ Երրորդութիւն [11] ըստ աւանդութեան սուրբ հարցն, ուղիղ դաւանել զբանն ճշմարտութեան. և ասել տայ մի մի [12] զբան, և ասէ ցնա քահանայն երիցս [13]. հաւատա՞ս [14] ի միանական սուրբ Երրորդութիւն [15], և նա պատասխանի տայ, թէ՝ հաւատամ. իսկ թէ չգիտիցէ խաւսել՝ թարգմանն կալցէ, և խոնարհեցուցանելով զնորադարձն և ունի քահանայն զձեռն ի վերայ գլխոյն և ասէ զաղաւթս զայս. Աստուա՛ծ, Փրկի՛չ մեր, որ կամիս զամենայն մարդկան զկեալ և ի գիտութիւն ճշմարտութիւն [16] գալ *, ընկա՛լ զծառայս քո զայս անուն, զհազիւ կարացեալս մաքրել ի մոլորութենէ և ցանկացեալ գալ ի գիտութիւն քոյ ճշմարտութիւնդ [17], քանզի դու ասացեր. Նաև այլ ես ոչխարք են իմ [18], որ ոչ են այսմ [19] գաւթէ [20], և զայն ես պարտ է ինձ ածել [21] այսր, և եղիցին մի հաւտ և մի հովիւ **. հովուեա՛ զսայ առ ի քէն գիտութեամբ ճշ-

1. Ա. զենօղ բ. զենող.
2. զմկրտութիւնն.
3. եւ հայք եւ վիրք.
4. այնորիկ հարկեցուցանել.
5. զոր.
6. որոյ.
7. զհրեայս.
8. մկրտել եւ լուսաւորել.
9. զզաւակ.
10. մկրտել.
11. երկիւղիւ.
12. տոկոսիւք.
13. Ա. Օ. այսպէս.
14. զհերձուածողս.
15. զարիանոս.
16. զկաթրոս.
17. Ա. զսամբատիանոս. բ. զսաբատիանոս
18. Ա. զչորեքտասաներակս.
19. զհերձուածս.
20. յորում.
21. որ.
22. վարդապետութեան եկեղեցւոյ.
23. քահանայն.

* Եփես. Դ. 6.

1. զսիրտն.
2. զզայարանսն.
3. արեանն.
4. պարապել.
5. առաւօտին.
6. աշակերտել.
7. կացուցանել զնոսա քահանայն.
8. մերն.
9. խորհողք.
10. աղանդոյն.
11. Երրորդութիւնն.
12. զմի մի.
13. Ա. երից.
14. հաւատաս.
15. Երրորդութիւնն.
16. ճշմարտութեան.
17. ճշմարտութեանդ.
18. Ա. իմ են.
19. յայսմ.
20. Բ. գաւթի.
21. Բ. ածել ինձ.

* Ա. Տիմ. Բ. 4.

** Յոհան. Ժ. 16.

մատչել լու Ներգործութեամբ սրբոց քոց[1], և արժանաւորեա՛ զմեզ Տէր, քո աստուածային մեռանիդ և սրբոյ Հոգւոյդ[2] անխարկութեանդ և հաղորդութեան պատուական մարմնոյ և արեան Քրիստոսի քո և վերայայտեալ զօր կատարել ծառա քո, զի ընդ հաւատ քո զուգաթուեցի[3] և սա՛ ի փառս և ի գովութեան[4] մեծութեան քո, զի քո է զօրութիւն և փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից[5] ամէն. Եւ որպէս յառաջին ասացի, ածանէ զնա որպէս նորինք[6], և դարձեալ աղօթէ զայս. Տէ՛ր Աստուած մեր, որ արժանի արարեր վերայ յայտել[7] կատարել ծառայի քո զայս անուն, ի ձեռն որ ի քեզ ուղղափառ հաւատով[8] և Հոգւոյ սուրբ մեռոնի, զոր Տէր ամենայնի, զոր ի քէն ճշմարիտ հաւատոյ սոյ հաւատա[9], զարդարեսցէ զսա արդարութեամբ և ամենայն շնորհաւք զարդարեա՛յ, քանզի աւրհնի և փառաւորի ամենապատիւ և մեծավայելուչ անունդ Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։ Իսկ նեստորիանոսաց, եւտիքիանոսաց[10] և այլ նոյնպիսի հերձուածողաց առել ի[11] խոստովանութիւն և նզովեալ[12] զհերձուածս յարում են[13] հերձուածք. աւծման չեն պէտք, բայց առին աղաւթս այս ի վերայ. Տէ՛ր Աստուած զաւրութեանց, Աստուած հոգւոց և ամենայն մարմնոց, Աստուա՛ծ ապաշխարողաց, որ զամենայն մարդիկ կամիս, զի կեցցեն և ի[14] գիտութիւն ճշմարտութիւն եկեսցեն, որ զպատրեալս ի մոլորս վարդապետութենէ դարձուցանես ի փրկութիւն, դու Տէ՛ր ամենակալ, ընկա՛լ զծառայս, որ զերծաւ յարոտայթից սատանայի և ընթացաւ ի սուրբ եկեղեցի քո, վասն որոյ պաղատիմք և աղաչեմք զքեզ, արա՛ լինել ի համար ընդ այնոսիկ, որ արեամբ քո փրկեցան, և պահեա՛յ զսա ի մահաբեր նետից թշնամոյն. զի մեռեալ էր և եկաց, կորուսեալ էր և գտաւ * և տո՛ւր[15] ամս

1. սրբոց եւ փառաւորեալ առաքելոց.
2. Հոգւոյդ.
3. Ա. զուգաթերեցի. Բ. զուգաթուեցի.
4. Ա. ի գովութիւն.
5. Ա. Օ. յաւիտենից. Բ. կրճատ.
6. նորակնիմ.
7. Ա. վերայայտեալ. Բ. վերայայտել.
8. հաւատով.
9. սա հաւատաց.
10. եւ եւտիքիանոսաց.
11. Օ. ի
12. նզովել.
13. ամենայն.
14. Ա. Օ. կեցցեն եւ ի Բ. զի ամենայն մարդիկ գիտութիւն.
15. եւ արդ տուր.

* Ղուկ. ժե. 32.

ամբիծ և անարատ խոստովանել զքեզ և ճշմարտութեամբ փառս տալ Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյդ[1], այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Իսկ զսիմոնացիս և զմիւս սիմոնացին և զկեղեցացին և զեւմիանոսս[2], որք միոյ հակառակ երկու մկրտին, և զմոնտանոսս և զարտիմոնացիս, և զաւբելացիս և զփոտիւղացիս, որք զորդի հայրութիւն ուսուցանեն, և որք ի Պաւղոսէ Սամոսատացւոյ[3] են խաբեալք, զմանիքեցիս և զմանինեցիս, զմարկիոնացիս, զվաղենտինոսս, զպեպուզացիս, զփոտինոսս, զնոատացիս,[4] զապալինարոսս, զկերինթինոսս,[5] զերգինացիսս. զմենանդրացիսս,[6] և որ այլ այսպիսի հերձուածողք[7] իցէ, պարտ է իբրև զհեթանոսս և իբրև զհրեայս[8] մկրտել.[9] և թէ զինչ են աղանդ նոցայ և որպէս ի դեպ է մկրտել և յոր աւուրս, զի մի լիցի յերկարութիւն ճառի՝ չառաք ի մէջ. Արդ, այս սահմանք հայրապետացն է[10] առաջնոց, զոր շնորհաւք սուրբ[11] Հոգւոյն արարել քննութիւն այսպէս կարգեցին. Արդ զի[12] զարիանոսաց և զհոգեմարտից ցուցին և սոցին[13] նմանեաց ոչ ի ջուր մկրտել, այլ խոստովանիլ զուղիղ հաւատն և նզովել զհերձուածն, և աւծանել միայն և աղաւթել ի վերայ նորայ,[14] իսկ զաղանդաւորս[15] իբրև զհեթանոսս և զհրեայս[16] մկրտել, զի բազումք ի նոցանէ անաստուածք և դիւապաշտք և կախարդք են, զոր պարտ է ամենայնիւ մկրտել։ Իսկ զնեստորիոսս[17] և զեւտիքիոսս ոչ մկրտել և ոչ աւծանել, այլ ուղիղ խոստովանիլ և աղաւթիւք օրհնել. Արդ, բարձեալ են աղանդաւորք շնորհաւքն Քրիստոսի,[18] և արիանոսքն և նոցին նմանք.[19] Արդ յայտ է, զի յոյնք և վիրք և հայք յայժ մեղանչեն զմիմեանս մկրտելով և աւծանելով, զի հայք ամբաստեն[20] զյոյնս և զվիրս վասն երկու

1. Ա. Օ. եւ ս. Հոգւոյդ. բ. Հոգւոյ սրբոյ
2. Ա. զեւմիանոսս. բ. զեւնոմիանոսս.
3. Ա. Սամոսատցւոյ. Բ. Սամոսատացոյ.
4. Ա. զնոտացիս.
5. Ա. զկերեթոսս. Բ. զկերինթոսս.
6. զերդինացիս, զմենանդրացիս.
7. հերձուածող.
8. զհրեայս.
9. մկրտել.
10. է հայրապետացն.
11. Օ. սուրբ.
12. Օ. զի.
13. զսոցին.
14. նոցա.
15. զաղանդաւորսն.
16. զհրեայս.
17. զնեստորիոս.
18. շնորհօքն Քրիստոսի բարձեալ են աղանդաւորք.
19. նմանք.
20. ամբաստանեն.

բնութեան[1] ասելոյն անմիաւոր՝ զՆեստորին ունել, և նորա զհայք բամբասեն զեւտիքէին ունել վասն միաբանութիւն[2] ասելոյն. և այն յայտ է և գիտելի է, զի մի բնութիւն ասեմք՝ ոչ զմարդկութիւնն ուրանամք, որպէս Եւտիքէս.[3] այլ վասն անճառ միաւորութեան[4] մի ասեմք, և նորա անգիտաբար գայթակղին: Այլ թէ նոցայն այսպէս մեզ կարծի զՆեստորին ունել, զի երկու բնութիւն է[5] ճշմարտիւ, բայց թէ յատկութեան[6] տան՝ այլ ասել զմարդն և այլ[7] զԲանն և անապան[8] յաստուածանալ մարմնոյն, զայդ անգիտանամք, զի այդ Նեստորի է. բայց առ ի քննել զյոյնս՝ այսպէս ծանեաք, եթէ յաղագս Եւտիքեայ ասեն զատկութիւնն[9] միշտ մարմնոյ[10] և վասն այդ[11] ի Նեստորի կարծի քարշել. սակայն ի ճշմարտից[12] ուսաք ի հարցն առաջնոց, թէ ծածկութիւն Նեստորի[13] է ժողովոյն Քաղկեդոնի խոստովանութիւնն, զոր ընդունին յոյնք, և վիրք նոցայ աշակերտեալք. զի և այդ ժողովոյն[14] Քաղկեդոնի ասացաւ, թէ յորժէ հետէ զՆեստորին եդիք[15] սահման՝ զՆեստոր ընդէ՞ր նզովեք[16], վասն որոյ այսոցիկ[17] վճիռ հատանել ոչ կարեմք. Եւ թէպէտ ասացեալ եղև, զի ոչ ճշմարտութեամբ զմահ խաչին խոստովանին՝ զդարձեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի արժան է մկրտել. զի առաքել ի մահ Տեառն ասէ մկրտել,[18] Զի թէ աստուածութիւնն ոչ էր ի ժամ մահու ընդ նմա, և մարդ մեռաւ՝ ո՛չ փրկեցաք ի մահուանէ, զի մարդ փրկել ոչ կարէ. Եւ արդ, թէպէտ[19] յոյնք և վիրք և հայք[20] այնպէս էին, որ[21] կարծեն միմեանց՝ ո՛չ է հրաման մկրտել, որպէս ցուցաք: Արդ, չիք ինչ պատճառ մկրտելո զմիմեանս, քան զանգիտութիւն և զամբարտաւանութիւն, և զաղթասիրութիւն.[22] և որք անգգնեն զայդ առնել՝ ցուցցեն. թէ զո՞ր Քրիստոս Թողուն և կամ զո՞րն խոստանին.[1] ահա ցուցին[2] հարքն, զի ոչ զՆեստորիոս—[3] և ոչ զԵւտիքիանոս արժան է մկրտել, և կամ ածանել, այլ միայն խոստովանութեամբ և աղաւթիւք օրհնել. Նաև Եւտիքիոս[4] ցուցանէ. և վասն այդոցիկ և պատահմունք՝ որք ընկալան զժողովն Քաղկեդոնի և զղջացան, թէ որպէս հարք[5] ուղղափառ ապաշխարութեամբ ի նոյն կարգ հաստատեցին, որպէս արար Պետրոս ծանրախաւս զԱնհակ զԹուլզանդիոյ[6] զհայրապետն, յորժամ դարձաւ յաղանդէ ժողովոյն Քաղկեդոնի. Արդ յայտնի է, զի որք ի հայոց ի յոյնս կամ ի վիրս դառնան՝ վասն փառաց աշխարհի է և վասն հեշտութեան մարմնոյն՝ թողեալ զփառս Աստուծոյ, զաշխարհի և զմարդկան առնուն, որպէս ասաց Տէր.[7] դասին այնպիսիքն իբր զուրացող ճշմարտութեան:[8] Արդ, այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ միմեանց[9] հաւանել և կալ յիւրաքանչիւր կարգի ամենայն ազգ, մինչ այց առնէ Աստուած և յարուցանէ Թագաւոր ազգաց, որ կարող լինի տիեզերական ժողով առնել:

Այլ արդ տեսանեմք, զի հայք և յոյնք և վիրք, ասորիք և հոռոմք ճշմարիտ զԵրրորդութիւն[10] խոստովանին և զՔրիստոս Աստուած—ճշմարիտ Որդի Աստուծոյ, թէպէտ և ի տնաւրութիւնն[11] այլայլեն, և զՄարիամ Աստուածածին թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, և զխաչ՝ Աստուծոյ խաչ. առ հայս[12] այդ առաւել ճշգրիտ է[13]: Այլ ինչ սակաւ բաժանումըն տաւնի, կամ պահոց կամ կերակրոց՝ չէ հաւատոյ բաժանումն. Հայք ճշմարիտ խոստովանողք են Քրիստոսի տնաւրէնութեանն և Քրիստոսի աստուածութեանն և ամենասուրբ Երրորդութեանն, և Աստուածածնին և խաչի և եկեղեցոյ, և նզովեն զԵւտիքէս, որ առաչաւք ասաց զՔրիստոսի տնաւրէնութիւնն, և զամենայն հերձուածողսն.[14] և զոր ուսեալ են ի սրբոյն Գրիգորոյ[15] շնորհաւքն Քրիստոսի, զայն ճշմարտութեամբ ունին: Այլ զոր զըրպարտեն, թէ Դունա[16] ժողովոյն հրաժարեցան ի

---

1. բնութիւն.
2. մի բնութիւն.
3. խորհս զնեստրիս.
4. անճառելի միութեան.
5. Օ. է.
6. յատկութիւն.
7. այլ ասել.
8. անապան գոյ.
9. զյատկութիւնն.
10. մարմնոյն.
11. այն.
12. ի ճշմարտիցն.
13. նեստորին.
14. ի ժողովն.
15. եղաւ.
16. ժողովէր.
17. յայսոցիկ.
18. Օ. զի—մկրտել.
19. թէպէտ եւ.
20. եւ հայք.
21. որպէս.
22. Օ. եւ զաղթասիրութիւն.

1. Բ. եւ կամ խոստովանին Ա. զո՞ր Քրիստոս խոստովանին, զո՞րն թողուն.
2. եւ անցուցին.
3. զնեստորիոս.
4. Նա Եւտիքիոս.
5. Հարքն.
6. Ա. զանկակ զԹուզանդիա.
7. Տէրն.
8. ճշմարտութիւնն.
9. զմիմեանց.
10. զերրորդութիւնն.
11. ի ստորկնութիւնն.
12. առ այս.
13. ճշմարիտ է.
14. Ա. հերձուածօղս. Բ. հերձուածողս.
15. Գրիգորէ.
16. ի Դունայ.

սրբոյն Գրիգորի ղաւանութենէն՝ ո՛չ հրաժարեցին,
այլ կանոնեցին ոչ պարտին[1] ի խուժկաց նեստորա-
կանաց․ նոյնպէս և յայլ ժողովսն, զոր արարել են՝
ոչ են պակասեցուցեալ, այլ հաստատեալ․ Այլ
զխոստովանութիւնն[2] հայոց ընդ ամենայն ուղղա-
փառ ազգաց գտաք․ բայց զի մի կարծիցէք անհա-
ռութեամբ ասել՝ զխոտելին եւս ասացից․ Ամենայն
ազգ ի ձեռնադրելն չառնուն[3] ինչ, բայց յետ
ձեռնադրութեանն տան և առնուն՝ այլ հայրապետ-
քն[4] հայոց՝ ժամանակիս և ոչ անցելոցն[5] ժամա-
նակաց, յառաջ առնուն և ապա ձեռնադրեն, պատ-
ճառելով զհարկ այլազգեաց, և այդ չէ հաճոյ Աս-
տուծոյ, և ոչ ի կանոնաց, այլ այդ յաղքատութենէ
ազգիս եմուտ․ Եւ վասն զպահսն չլուծանելոյ զյի-
շատակ սրբոց վկայից[6] ոչ տաւնեն, և այդ կար-
ծիւք բարոյ[7] չար է, զի ամենայն սուրբք տաւնել
են[8] պահոց և յաւուրս յարութեան, որպէս ի նա-
ւակատեաց ճառին յիշէ Աստուածաբանն[8] զտաւն
Մամասայ վկային և վասն Սքանչելագործին գրեալ է
Գրիգորի, և յիշէ Եփրեմ երանելին ի յիւր[9] կա-
նոնսն, թէ ի չորեքշաբաթու և յուրբաթու ոչ տաւ-
նէր,[10] բայց ի յարութեան աւուրսն տաւնէր․ զեր-
կուցն տեսանեմք խոտան՝ զհայոց չտաւնելն և
վրաց[11] ի պատճառս տաւնին լուծանել զպահսն՝
Այլ զի յոյժ պատուեն վիրք զկնքահայրսն, գո-
վելի է, թէպէտ և ոչ է կանոնական, և զի բամբա-
սեն զհայք, թէ ղազգականս[12] առնեն կնքահայր,
ահա աստուածաբան Գրիգոր իւր հաւրն հոգևոր
հայր եղև․ քահանայք[13] հոգևոր հայր են աշխար-
հի և խնամութիւն առնեն նոցայ, պարտ է զգուշա-
նալ ըստ արժանին․[14] Առաջնորդաց անհնազանդ են
հայք, բայց սրբութիւն կրաւնաւորաց ի հայք ա-
ռաւել գտանի և արժանաւոր պատարագ, քան զայլ[15]
ազգ։ Այլ թէ իմաստուն էաք, զայսպիսի ընտրու-
թիւնս ի Քրիստոս թողեալ՝ բարի գործոց պարա-
պէաք, որպէս ասաց ինքն տէր․ Ո՛չ ամենայն որ
ասէ ցիս Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից,
այլ որ արասցէ զկամս Հաւր իմոյ, որ յերկինս է.*
և յաւր յարութեան մեր չասէ՝ եկայք այս անուն
ազգ կամ այն, այլ զբարեգործսն կոչէ և աւրհնէ
յամենայն ազգաց, և զայն զի՞արդ սահմք․ Եկես-
ցեն յարևելից և յարևմտից և բազմեսցին ընդ Աբ-
րահամու և ընդ Սահակայ և ընդ Յակոբայ,**
մի՞թէ ընդ ամենայն[1] աշխարհ հայ միայն է և կամ
վրացի և կամ հոռոմ․ Քրիստոս չէ նախանձոտ,
նա զամենայն ազգ ընկալեալ է․ զի զարքայութիւնն
զուռկանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց
ըմռին․[2] *** Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն
քրիստոնէին, որ զտածիկն և զջահուտուտն[3] լաւ
ասէ քան զհայն․ այնպիսի ասացողքն չունին թո-
ղութիւն, ոչ աստ և ոչ ի հանդերձեալքն,[4] թէ
չապաշխարին․ Թէ հայ վրացիոյ[5] ասէ և[6] կամ
վրացի ի[7] հայոյ, և կամ այլ քրիստոնեայ ազգ
քրիստոնէի․ զի ամենայն քրիստոնեայք եղբարք են,
և Քրիստոս հրամայեց․ Որ ասէ ցեղբէր[8] իւր մո-
րոս՝ պարտաւոր լիցի գեհենի[9] հրոյն․****

Ահա այդ չափաւոր գրեցաւ և ընտրութեամբ[10],
զի մի տաղտկալի լիցի յերկարութեամբ․ Եւ արդ,
թէպէտև[11] բարեպաշտ թագաւորք[12] մեր չեն
բաւական՝ Թամար և Դաւիթ, տիեզերական ժողով
առնել ամենայն ազգաց, վասն հեռաւորութեան
յունաց և հռոմայեցւոց[13] և այլոց ազգաց, այլ Աս-
տուծոյ շնորհաւքն կարող են զհայոց և զվրաց
թշնամութիւն[14] բառնալ, որ զՔրիստոս չհայհոյեն․
զի այն Քրիստոսի է ատելութիւն,[15] որ զխաչ և
զխատ[16] և զեկեղեցի միմեանց հայհոյեն և նա-
խատեն․ Եւ որպէս ցուցաք յառաջագոյն՝ այն էր
Աստուծոյ հաճոյ և Քրիստոսի կամք, զի ամենայն

---

1. ոչ պարտիլ.
2. զխոստովանութիւն.
3. ձեռնադրելն չառնու.
4. հայրապետս.
5. անցելոց.
6. վկայիցն.
7. կարեւոր բարոյ.
8. Ա. տօնելի են.
9. Աստուածաբան.
10. երանելի յիւր.
11. Ա. ոչ տօնէր ի չորեքշաբթու եւ յուրբաթու.
12. զվրաց.
13. ղազգականն.
14. եւ խնամայք.
15. ըստ արժանւոյն.
16. յայլ.

---

1. յամենայն.
2. ըմբռնեն.
3. զջհուտն.
4. ի հանդերձեալսն.
5. Վրացոյ.
6. Ո. եւ.
7. Ո. ի.
8. ցեղբայր.
9. զհենն հոյ.
10. եւ ընտրութեամբ եւ զոյգ վկայութեամբ.
11. բէպէս.
12. բազաւորն.
13. Ա. հռոմայեցւոց. Բ. հռոմայեցւոց.
14. ըշնամութիւնն.
15. եւ ըշնամութիւն.
16. զհաւատ.

* Մատթ. է. 21

** Ը. 11.

*** ԺԴ. 47.

**** Ե. 22.

ազգ քրիստոնէից միայնիրաւն [1] էին լեալ. բայց չէ հնար, [2] որպէս գրեցաք, այլ զկարիլին չէ հնար խափանել: Զի դուք իշխանք էք Հայոց և Վրաց կամաւքն Աստուծոյ, և թէ կամիք, ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն, որ ոչ [3] զեկեղեցի աստուծոյ [4] չքակեն և զխաչ այրեն, և այսմ ժամանակայ իշխանութեամբս և յաւիտենական թագաւորութիւնն առնուն ընդ բարեպաշտ թագաւորացն ընդ Կոստանդիանոսին, ընդ Թէոդոսի և ընդ Տրդատայ և ընդ Նախնի թագաւորացն ինքեանց, աստուածասիրացն Բագրատունեաց, և պսակին [5] ի Քրիստոսէ՝ ի ճշմարիտ թագաւորաց թագաւորէն, և հաստատուն ունիցեն զթագաւորութիւնն ինքեանց, բարի շառաւեղաւն, գեղեցիկ աթոռակալաւն, ի խաղաղական կեանսք [6] և յաղթութեամբ պատերազմաց և բարեպաշտութեամբ կեալ յաշխարհի. Հանդերձ քրիստոսասէր իշխանաւքդ՝ քաղցըր կամաւք և իրաւամբ [1] դատաստանի, և առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ, և բարի անուամբ Քրիստոսի հաճոյանալ և ժառանգել զարքայութիւնն աստուծոյ. զի և մենք վայելեսցուք ի կեանս գոցա: և անթառամ և նորատունկ զաւազի [2] արքայութեան ի կենս [3] նորա ուրախացեալք [4] Քրիստոսի երկրպագութեամբ, որ է աւրհնել և փառաւորել [5] ընդ Հաւր և ամենասուրբ Հոգւոյն [6] այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից [7] ամէն.*

1. միակրօն.
2. չէ արժանի.
3. Օ. ոչ
4. Քայոց
5 պսակիցեն.
6. կենօք.

1. իրաւամբ.
2. զաւազանի.
3. արքայութիւնն ի կեանս.
4. եւ պայծառացեալք.
5. եւ փառաւորել.
6. եւ ընդ Հոգւոյն սրբոյ.
7. Ա. Օ. յաւիտենից. Բ. կրճատ.

* Բանն օրինակի վերջում. Գրեցաւ սակաւ աւուրս այս ձեռամբ տխմարի միոյ, զոր Գրիգոր ճանաչին մականունն սանանեցի, հրամանաւ Միրզի. աղաչեմ յիշել ի Տէր:

## ՎՐԻՊԱԿ *

| ԵՋ. | ՏՈՂ. | ՍԽԱԼ. | ՈՒՂԻՂ. |
|---|---|---|---|
| Ա. | 11 | Բանահիւսէր | Բանահիւսեր |
| Բ. | 21 | տեսնեն | տեսան |
| » | 24 | տեսայ | տեսան |
| » | 35 | փառաւորէ | փառաւորեց |
| Ե. | 32 | մեծ հովիւ էր | հովիւ էր |
| Զ. | 9 | բերեն | բերինք |
| » | 14 | վեր | վէր |
| » | 23 | բերենք | բերինք |
| Է. | 38 | փոխեցէք | փոխեր էք |

* Յունուարի տետրակում հրատարակուած «Բեթլեհեմի ծաղիկ» բանաստեղծութեան մէջ ձեռագրի անզգոյշ արտագրութեան պատճառով հետեւեալ սխալներն են սպրդել.